ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «29» հունիսի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 29-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ԹԻՎ 08-Ա/Ք ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի № 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում անցկացված «**ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018**» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներից տրամադրվող գումարների օգտագործման մասին» 2018 թ. մարտի 21-ին կնքված ՀՌ18-09 պայմանագրի 2-րդ կետի «2.1.4» ենթակետը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Ա. Պապոյանի 22.06.2018թ. թիվ 2440-172 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2018թ. մարտի 1-ի թիվ 08 – Ա/Ք հրամանի հավելվածի 9-րդ (իններորդ) կետում որպես «ՀՌ18-09» ծածկագրով ծրագրի ղեկավար «Միրզախանյան Արմեն Ասպետի» փոխարեն նշել «Մանուկյան Արամ Սպարտակի»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ